ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 սեպտեմբերի 2012թ. թիվ 437

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 160, 164 հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1838-Ն որոշումը և հաշվի առնելով Վ. Մարտիրոսյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վոլոդյա Մարտիրոսյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը ս/թ սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:

2. Վ.Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել փոխտնօրեն Կարինե Մհերյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 13
ք.Վանաձոր